Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-23/19 ծածկագրով Աջափնյակ վարչական շրջանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.01.2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բոյաջյան
Գ. Ծատուրյան
Մ. Հարությունյան
Ս. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցությունների արդյունքների մասին

(Ռ. Ադամյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցություններին «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ն չի ներկայացել, որի գնային առաջարկը մնացել է անփոփոխ: Բանակցություններին ներկայացած «ՍՏԵՊՌՈԵԿՏ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ վերջնական գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ՍՏԵՊՌՈԵԿՏ» ՍՊԸ	**3 000 000**	780 000	0	780 000

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ռ. Ադամյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին:

Գնման առարկա	Ընտրված մասնակից	Այդպիսին չճանաչված մասնակիցներ
Աջափնյակ վարչական շրջանի շենքի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման ծառայություններ	«ՍՏԵՊՌՈԵԿՏ» ՍՊԸ	«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ, «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ, Ա/Ձ Արմեն Խաչատրյան Պողոսի

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Ադամյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ ընտրված մասնակից՝ «ՍՏԵՊՌՈԵԿՏ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Ադամյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ռ. Ադամյան

Անդամներ՝ _____ Ա. Բոյաջյան

_____ Գ. Ծատուրյան

_____ Մ. Հարությունյան

_____ Ս. Թորոսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ. Հակոբյան